

Թագ. ԺԸ. 1-40, 42-45, Դ. Թագ. Դ. 17-37 պատմուած դէպքերը նշանաւոր ըրած են Կարմեղոսը:

Այս լեռը գերազանցօրէն ընդունակ ըլլալով ներհայեցական կեանքին՝ շատ կանուխէն հրապուրեց քրքրիստոնեայ մենակեացները: 570ին Բլէզանսի Անտոնիւնոսը Սիգամոսի հարաւը ցոյց կուտայ «Եղիսէ մարգարէին վանքը ուր հանգիպեցաւ այն կնոջ որուն զաւկին յարութիւն տուաւ»: Այս վանքին հետքերը տակաւին կը տեսնուին Մարտիրոսաց հովտին մէջ: Խաչակիրներէն Պաղեստինը գրաւուելէ յետոյ աւելի բազմացան քրիստոնեայ մենակեացները լեռան թէ վրան և թէ ստորոտը: Բենիամին Թուտելա 1160ին կը գրէ. «Հայֆայէն ոչ հեռու կը գանուի Եղիա մարգարէին այրը, երկու քրիստոնեաներ հոն շինած են մատուռ մը»: Խաչակիրները երբ Երուսաղէմը կորսնցուցին ու ծովեզերքը հաւաքուեցան՝ Կարմեղոսի վանականներն ու մենակեացները աւելի բազմացան և շինեցին վանքեր ու եկեղեցիներ:

Կարմեղոսի ստորոտը կը գտնուին Մարգարէներու դպրոցը, Եղիայի աղբիւրը և ուրիշ պատմական վայրեր ուր կ'այցելեն ուխտաւորները: Դպրոցին բակին մէջ կը բացուի Ս. Եղիայի փարայրը որ ԺԵ. դարէն սկսեալ ընդհանրապէս կը կոչուի Մարգարեից դպրոց: Էջ-Ուրսր անունով մզկիթի մը վերածուած է ան. իսլամները այս կերպով կը նշանակեն Եղիա մարգարէն, որ ըստ Ս. Գրոց չէ մեռած: Քարայրը 14 մ. երկայն, 7 մ. լայն և 6 մ. բարձր է: Մարդու ձեռքով կանոնաւորուած է ան, եւ պատերը ծածկուած են ծեփով մը որուն վրայ այլևայլ ուխտաւորներ իրենց անունները նշանակած են: Այս սրբավայրը միշտ յարգանքի առարկայ եղած է հրեաներու, քրիստոնեաներու և իսլամներու: